

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

2 թիւ միկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

—o—

Մանկական տղր
20 ասնրիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

—o—

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Грнррррррррр
ԵՒ ՏՐԱԽԻՐ

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ընկերվարականութեան իրազոր-
ծումը իրեն հեռաւոր նպատակ ու-
նեցող կուսակցութեան պատկանող
պարոն մը, վերջին օրերս Ռուս-
ճուգէն վառնայ եկած ըլլալով,
հրապարակային ժողովի ձեւով ե-
րիտասարդներու գումարում մը
հրաւիրած էր, յեղ. միութեան
վրայ իր տեսութիւնները պարզե-
լու համար։ Այս պարոնին տեսու-
թիւնները լսելու պատահութիւնը
ունենալովս, աւելորդ չեմ համա-
րեր հոս անոնց մասին քանի մը
բաներ ըսել, նկատելով խնդրոյն
հանրային օգտակարութիւնը։

Ըսեմ նախ թէ, ընկերվարա-
կան դաւանանքը ու ազգ. յեղ.
գործունէութիւնը իրարմէ հիմնո-
վին անշատ, հիմնովին տարբեր
բաներ են. անոնց երկուքին մէջ
համասեռութիւն մը կա՛մ կապակ-
ցութիւն մը հաստատելը անկարե-
լի է բացարձակապէս։ Յեղափո-
խութիւնը վարչական պիղծ տի-
րապետութիւն մը տապալելու հե-
տամուտ եղող ժողովուրդի մը
ջանքն է. ընկերվարականութիւնը
ժողովուրդի մը տեսական կազ-
մակերպութեան վրայ տարուած
դաւանանքներէն մին է միայն, որ
ժողովուրդի բարօրութեանը հա-
մար կարգ մը ընկերային բարե-
նորոգումներ անհրաժեշտ կը դա-
տէ։

Յեղափոխութեան ու ընկերվա-
րականութեան մէջ որ եւ է կա-
պակցութիւն մը չընդունելը, չի
նշանակիր թէ յեղափոխական մը
ընկերվարական ըլլալու չէ հարկա-
ւորապէս. յեղափոխական մը կա-
տարեալ ազատութիւն կրնայ վա-
յելել իր կարծիքներուն ու դաւա-
նանքներուն արտայայտութեանց
մէջ. ազգային ապագայ կազ-
մակերպութեան մը նախընտրա-
կան կերպին վրայ յեղափոխակա-
նի մը իր տրոյն գաղափարները,
ուրոյն համոզումները ունենալու
իրաւունքը մենք չեն որ կուրա-

նանք։

Սակայն երբ ընկերվարական—
յեղափոխականը ինքն է որ կենե-
կըսէ թէ ընկերվարական ու ոչ-
ընկերվարական կուսակցութեանց
մէջ միացում մը իրագործելու
ձգտիլը բանտաբուշանք մըն է
անիրանալի, իրաւունք կուտայ
մեզ որ սա խոհրդածութիւնները
ընենք։

Անուրանալի է թէ յեղ. տար-
բեր տարբեր կուսակցութիւններ,
Հայաստանի վիճակին բարեփո-
խութիւնը տարբեր տարբեր ծրա-
գիտելու իրագործումին մէջ կը
տեսնեն. հետեւաբար մեր յեղա-
փոխական գործունէութեան մէջ
ուժերու բաժանում կայ ներկա-
յապէս. արդ, ուրուժերու բաժանում
կայ, հոգ տկարութիւն կայ իրաւ-
փաքս. ու որչափ տկար ըլլանք
Հայաստանի յեղափոխութեամբ
բարեփոխութիւնը այնքան կը դը-
ժուարանայ։

Ու ահա, մեր յեղափոխական
գործունէութեան տեսակէտով, ու-
ժերու այս բաժանումէն, Հայաս-
տանի բարեփոխութեանը համար
անխուսափելի դժուարութեան կամ
յապաղումին դարձան մը գտնելու
ակնկալութեամբ է որ կարգ մը
հայրենակիցներ «Ժողովրդային
Միութիւն» համանունով ճանչ-
ցուող համախմբութիւնը կազմե-
ցին։

Յեղ. Միութեան այս տեսակէ-
տին մէջ ըմբռնումը Պ. յեղափո-
խական-ընկերվարականը կընդու-
նէր, ու չէր ալ ուրանար թէ կու-
սակցութեանց այժմեան մեկուսա-
ցեալ գործունէութեան մէջ կապ
մը հաստատելը անհրաժեշտ է.
միայն թէ այսպիսի նպատակի մը
իրագործումը «Համերաշխ գոր-
ծակցութիւն» կանուանէր, ու ոչ
«Միութիւն»։

Բաւերու խճողում, ապահովա-
պէս։

Այնպիսիք, սակայն և այնպէս,
այս խճողումը լուսաբանել։ Նոյն
նպատակին ձգտող կազմակերպու-
թեանց մէջ Միութիւն կարելի է,
կըսենք մենք, ու քանի որ հա-
ւասարապէս թէ ընկերվ. և թէ
ոչ-ընկերվ. մեր կուսակցութիւննե-
րը նոյն նպատակին (Հայաստանի

վարչային բարեշրջումին) կը ձգ-
տին, իրենց գործունէութեան մէջ
կատարեալ միութիւն ու նոյնա-
թիւն կարելի է հաստատել, ու
«Ժողովրդային միութիւն» պաշտո-
նը ու նպատակը այդ նոյնութիւ-
նը ու միութիւնը իրագործել է։
Ընկերվարական-յեղափոխական-
ները կամ կընդունին թէ նոյն
նպատակին (Հայաստանի բարեշր-
ջումին) կը ձգտին մեր կազմակեր-
պութիւնները, կամ տարբեր նը-
պատակներու հետամուտ են։

Իսկ եթէ դիտել տան թէ ընկ-
կուսակցութեան մը նպատակը թէ
եւ Հայաստանի վարչային բարե-
շրջութիւնն է, բայց այս իրենց
ծրագրին առաջին մասն է միայն,
մինչ ծրագրոյն հեռակայ մասը կը
տրամադրէ Հայաստանի ապագայ
կազմակերպութեան մէջ, վարչա-
յին բարեշրջումներէ դատ, ընկե-
րային բարեշրջումներու ալ իրա-
գործումը, բան մը որ ոչ-ընկերվ-
կուսակցութեանց մէջ չգտնուելո-
վր, նոյն նպատակին ձգտած չեն
լինիր, կը պատասխանենք. նախ
Հայաստանի վարչային կազմակեր-
պութիւնը բարեշրջելու է, անոր
ընկերային կազմակերպութիւնը
բարեփոխել առաջ. արդարեւ,
ընկերվ. դրութիւնը հաստատելու
համար, իր տրամադրութեան ներ-
քեւ երկիր մը ունենալու է. ու
ընկերային բարեշրջումներով ժո-
ղովրդի մը գործաւոր դասակար-
գին իրաւունքները ապահովելէ
առաջ, նախ այդ ժողովուրդին
կեանքը ապահովելու է։ Արդ,
մեր երկիրը, Հայաստան, ներկա-
յապէս, օտարի մը տիրապետու-
թեան տակ կը հեծեծէ. ու, մեր
ժողովուրդը, իր կեանքին ու
ինչքին մէջ վտանգուած է։

Հակառակեալ պիտի չըլլա՞ր,
հակառակաբանական պիտի չ'ե-
րեւէ՞ր այժմէն, մեր ժողովուրդին
ապագայ լաւագոյն կազմակերպու-
թիւնը պատրաստելու ձգտիլ, երբ
վտանգ կայ անոր ներկայ յոռի
կացութեան յոռեգոյն ըլլալուն։

Եթէ ընկերվ. յեղափոխականնե-
րը իրենց մօտաւոր ծրագրոյն մէջ,
Հայաստանի ներկայ յոռի վարչու-
թեան բարեփոխութեանը հետա-
մուտ են, ինչու իրենց ծրագրոյն
այդ առաջին մասին իրագործու-
մին հաւասարապէս հետապնդող
ուրիշ կազմակերպութեանց ու ի-

րենց միջեւ գործունէութեան կա-
տարեալ միութիւն մը չի հաստա-
տուի. ատեն մը Պոլիս, Հայաս-
տանը դաստիարակելու համար ե-
րեք ընկերութիւններ կային. այդ
երեք ընկերութիւնները եթէ Մի-
ացեալ ընկերութիւնը կազմեցին,
ինչո՞ւ մեր յեղափոխական կուսակ-
ցութիւններն ալ «Միացեալ Յե-
ղափոխութիւն»ը չի կարենան կազ-
մել, երբ նպատակներն բացարձա-
կապէս նոյն է, այսինքն «Հայաս-
տանի վարչային բարեկարգութիւ-
նը» յեղափոխութեան միջոցով։

Որքան ատեն որ ընկերվ. կու-
սակցութիւն մը իր ծրագրին այս
առաջին մասը չիրագործէ, երկ-
րորդ մասին իրագործումին պիտի
չի կրնայ ձեռնարկել. ու որքան
ատեն որ մէկուսացած գործէ,
այնքան իր ծրագրին առաջին մա-
սը պիտի դժուարանայ. ընկերու-
թեան շահն իսկ, ուրեմն միա-
ցեալ գործունէութիւն մը կը պա-
հանի։

Հետեւապէս, ոչ-ընկերվ. կու-
սակցութեանց միջեւ ու ընկերվա-
րութիւնը իրենց հեռաւոր նպա-
տակ, բայց Հայաստանի վարչա-
յին բարեշրջութիւնը իրենց մօտա-
ւոր նպատակ ունեցող կուսակցու-
թեանց մէջ գործունէութեան կատա-
րեալ «միութիւն» կարելի է գըտ-
նել, սա գերադանց պատճառաւ որ
ոչ-ընկերվ. կուսակցութեան մը հե-
տապնդած նպատակը նոյն է, ինչ
որ է ընկերվ. կուսակցութեան մը
ծրագրոյն առաջին մասին պահան-
ջումը։ Ուրեմն, ինչպէս «Միա-
ցեալ ընկերութիւն»ը, նոյնպէս
մեր յեղ. կուսակցութիւնները կըր-
նան «Միացեալ»ը կազմել։ Ու ե-
թէ օր մը երկինք մեզ վիճակէ
Հայաստանի վարչային բարեշրջու-
թիւնը տեսնել, այն ատեն միայն
ժամանակը եկած պիտի ըլլայ ը-
սելու թէ ընկերվարական դրու-
թիւնը Հայաստանի կազմակեր-
պութեան կը պատշաճի՞ թէ ոչ։
Բայց հիմակ ազգին գոյութիւնն
իսկ վտանգի մէջ է, ու չենք կա-
րող նոյն իսկ ըսել թէ դա՛ն բը-
նաջնջումէ պիտի յաջողինք աղա-
տել։

Շնորհ, մահու ու կենաց մէջ
տապալակող ժողովուրդի մը տես-

լական ընկերային բարենորոգումն ց
վրայ չխօսինք. ազատենք նախ
ծովուն մէջ խղճուելու վրայ եղող
մարդը, ու յետոյ անոր բացա.
տրելու կենանք թէ երջանիկ
կենանք մը վարելու համար, իրեն
ի՞նչ բաներ հարկաւոր կըլլան:

S. Էրմանեան

ՍՏՈՐ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Պոլիս բնակող հայ օրիորդ մը
թուրք կառավարութեան մատնող
նամակի մասին վաճան Շահրի-
ման երկար գրութիւն մը հրա-
տարակած և մէկ օրինակ ալ խմ-
բագրութեանս զրկած է:

Այդ գրութեամբ վ. Շահրի-
ման կը բացատրէ թէ 1899ին Ղե-
ւոն Սարգիսեան՝ ուրիշ ամբաս-
տանութիւններէ ծանրաբեռնուած
և անօթի՝ անձնասպան ըլլալու վի-
ճակին հասած էր: Իր դառն կա-
ցութիւնը ապահովելու համար

անօթի մնալ բայց անպատճառ
Ֆիլիպէի մէջ պաշտօն մը ըստանձ-
նել կը բաղձար, որպէս զի մի-
ջոց մը գտնէ իր պատիւը վերա-
կանգնելու և յաջողելու դարձնալ
Պ. Գրգգէսէիանի (*) ըով մտնել:

Լ. Սարգիսեան իր մտերիմ Շահ-
րիմանին Ֆիլիպէի ազգ վարժա-
րանաց տնօրէն երթալէն քաջա-
լերուած, ասոր միջոցաւ կը ջա-
նայ իր բաղձանքը իրագործուած
տեսնել: Այդ միջոցին վարժուհի
մը կ'ապապրուի Պոլսէն, հոգա-
բարձութիւնը բանակցութեան մէջ
կը գտնուի այդ վարժուհիին հետ:
Լ. Սարգիսեան միջոց կը փնտռէ
որ վարժուհիին Պոլսէն գալը ան-
կարելի ընէ որպէսզի ինքը կոչուի
այդ պաշտօնին (ինչպէս որ Պոլսե-
րիոյ մէջ շատ անգամ երբ վարժու-
հի կը պակսի, վարժապետները
այցելութեամբ կը դասախօսեն
աղջկանց վարժարանին մէջ ալ):

Վերջապէս, բոտ Շահրիմանի
խոստովանութեան, Լ. Սարգիս-
եան գիշեր մը կը յղանայ վար-
ժուհիին Պոլսէն երեւել անկարե-
ւի ընելու համար մատնութեան
նամակ մը գրելու խորհուրդը, ու
Շահրիմանի ընացած միջոցին կը
խմբագրէ այդ նամակը. բայց
թուրքերէնի մէջ տկար ըլլալով
չի յաջողիր պէտք եղածին պէս
գրել. ուստի կը հարկադրուի
վարպետակ ձեռով մը իր մտերիմ
Շահրիմանին սրբագրել տալ:

Շահրիման նախ «պատուէ այդ
թուղթը» կըսէ: Չէ՛, ասիկա պի-
տի պահն մը կը պատասխանէ Սար-
գիսեան, ու անգամ մըն ալ կը
կարդայ իր գրած մատնութեան
թուղթը:

Հոս Շահրիման կը խոստովա-
նի այսպէս. «փորձուեցայ՝ տաճ
կտրանի՝ ոճիկ իր սխալները հաս-
կցնել և առանց մտքէս խաղ մը,

(*) Լ. Սարգիսեան քիչ առաջ Պ.
Գրգգէսէիանի գործարանին մէջ զը-
րպիւր եւ իր տիրոջ դասակներուն
դաստիարակն էր, բայց ծանր ամբաս-
տանութեանց տակ դուրս ձգուած:
Կարծէ որ իրազեկ մը մանրամասնէ
այս տխուր պարագան ալ:

նենգութիւն մը անցնելու, առի-
թուղթը ու ես ալ գրեցի:»

Ինչպէս կը հասկցուի Շահրի-
ման ուրիշ թուղթի մը վրայ նոր
նամակ մը խմբագրեր է. և յե-
տոյ թուղթերը հոն, իրենց ննջա-
սենեակը, ձգելով մեկներ են մի-
տակը: Բայց փողոցը Շահրիման
կըսէ Լ. Սարգիսեանի «Լեւոն չըլ-
լայ որ միկու մը ձեռք անցնին
այդ թուղթերը. գնա՛ վերցուր
պատուէ զանոնք»: Սարգիսեան
«Շիտակ է մտածուած» ըսելով
տուն կերթայ ու երբ կը վերա-
դառնայ, Շահրիմանին «ի՞նչ ը-
րիր» հարցումին կը պատասխա-
նէ. — Երկուքը մէկ արեւիցի, լը-
մընցաւ (**):

Ահա այս է ամբողջ իմաստը
Շահրիմանի հրատարակած գրու-
թեան:

Սակայն Շահրիմանի մոլոր
ձգածքով բանի կէտերը լուսաբա-
նելու համար կուզենք սա հար-
ցումները ընել իրեն.

1. Երբ դուք ումին պարագաներ
կը յիշէք ի՞նչու չէք հաճիր կամ
չէք ուզեր նամակին պարունակու-
թիւնն ալ գտնէ մօտաւորապէս
յայտնել:

2. Իրա՞ն է որ այդ թուղթերուն
տակ «երկու թուրք հայրենասէր-
ներ» ստորագրուած է:

3. Ի՞նչ կարծէ՞ք որ Լ. Սարգիս-
եան ձեզ ալ նենգութիւն մը
խաղ մը ըրած ըլլալու համար ձեր
ձեռագիրը իր քով պահէ ու ա-
նոր ընդօրինակութիւնը նամակա-
տուն ձգէ:

4. Վարժուհիին Ֆիլիպէ գալ
մերժելէն առաջ էր հարկու Սար-
գիսեանի ահաւոր մատնութեան
մը խորհուրդը յղանալը. այնպէս
չէ՞:

Շահրիմանի մասին մեր վերջին
խօսքը ըսելու համար մեր այս
չորս հարցումներուն պատասխա-
նին պիտի սպասենք:

Իսկ վերադառնալով Լ. Սար-
գիսեանի, ասոր առջեւ փախու-
տի, արդարացումի ոչ մի ճամբայ
չի նշմարելու: Այլ իր խոստովա-
նութիւններով, Շահրիմանի հրա-
տարակած գրութիւնովը և վ.
Մազմանեանի մէջ տեղ բերած վր-
կայութիւններովը հաստատուած է
թէ Լ. Սարգիսեան մատնութեան
նամակը յղացած, գրած, ձեռով
մը Շահրիմանին սրբագրել տուած
ու վերջապէս՝ նամակատուն յանձ-
նած է. ասոր ալ հետեւանքը ըլ-
լալով, մատնուած օրիորդին տունը
խուզարկուած և ինք ոստիկանա-
տուն տարուած բերուած է: Եւ այս
նշակալի քայլը Սարգիսեան կուռնէ
Ֆիլիպէի ազգ. վարժարանին մէջ
պաշտօն մը ձեռք ձգելու ցօծ մը
տաճութեամբ:

Այլ վարձօն ուզածին չափ փո-
ղոցները թող պտըտի, յիմար
տղայ մը ձեռք ձգելու որպէսզի
տնոր ստորագրել տայ հրաւիրա-

(**) Բայց Լ. Սարգիսեան հոռոմանց
ըսած է թէ «թուղթերը պատռեցի»,
մինչդեռ Շահրիմանին ըսեր է «այրե-
ղի»: Այս հակասութիւնն ալ ցոյց
կուտայ թէ Սարգիսեան ոչ այլքած է
ոչ պատուած այլ բոստը ձգած ինչ-
պէս որ կը պնդէ Մազմանեանը:

ւերագիր մը Լ. Սարգիսեանը ար-
գարացնելու մտօք երիտասարդ-
ներէ (?) դատարան մը կազմելու
համար:

Վերջապէս կը գտնուի Միհրան
Ջգօնեան անուն հաստատուող ան.
Ֆաւ կարէ մը՝ որ մատնիչ ամ-
բաստանուածին քանի մը ամիս
առաջ իրենց ինպատու կանգնած
Ազատ քեմալին ի հաշիւ երախտա-
գիտական հարկ մը վճարել կուզէ
և ի՞նչ գնով. . .

— Օհօ՛. ինքն ալ միտակցող ան.
դունդ գործելու գնով:

Այս աստիճան յիմարութեան մը
հանդէպ արգահատանքէ զտու ու-
րիշ բան չունինք:

ՀԱՇՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՆՈՒՐԱՏՈՒՆԻՒՆ

Ի նպատակ երկեսո որբարխանիս հոկ.
25ի երկուշեան տրուած երեկոյթի
հաշուեցուցակը:

ՄՈՒՏԻՔ	
Թախուած ընդհանուր առմ-	Լեւ/ Արծ.
աւակներէ	874. —
Թաղկեմիջերէ	54. 15
Սիկարէթէ	11. 95
Նուիրատուներէ	19. —
Ապառիկ մնացած	17. —
	967. 10

ԵԼՔ	
Ծաղիկի եւ սիկա-	7. 20
Էթի	
Քարիւղ, մոմ և	11. 50
գամ	
Որբերու պատկեր- ներուն շրջանակ, շը- ղարչ եւ երկդ	4. 80
Թուղթ, պահարան, մարքա եւ այլն	— 75
Լապտերի, նստա- րաններու վարձք եւ փոխադրութիւն	8. 10
Դերասանական եւ երգեցիկ խմբի հիւրա- սիրութիւն	12 50
Նուագածուներուն	25. —
Բեմական ծախս	6. 20
Սպասաւորներուն	9. 30
Տպագրական ծախս պուլկար տպարանին, իսկ հայերէնի եւ թղ- թի համար եղած 5 ֆր- ծախս Տ. Գուրպէթ- եան նուիրեց ընկե- րութեանս:	7. —
	92. 35

Զուտ հասույթ

874. —

Գործ. ժողովս շնորհակալութեամբ
ստացած է հետեւեալ նուիրատու-
թիւնները: Վէճի մը եւ հաշուութեան
առթիւ Պ. Պողոս Մանուկեանէ 10
ֆր., Պ. Ռուբէն Գալանճեանէ եւ Պ.
Թարութիւն Սաչկեանէ մէկ մէկ ֆր.
Խսկ Պ. Պողոս Մարտիրոսեանէ եւ Պ.
Նիկողոյմոս հաճի Սարգիսեանէ 50 ա-
կան սանթիմ:

Մնամք յարգանք
Ի գիմաց Գործադիր Ժողովոյ
Ասեմապիւր Վան Ստեփանյանի
Թ. Կ. ՃԱՆԿԻԿԻԵԱՆ Թ. ՄԱՐԻՆԵԱՆ
Գանձապետ
Խ. Ա. ԶԱԿԱՆԻՆԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայ. լեզափոխական կուսակցու-
թեանց միջեւ միութեան խնդրոյն
միջնորդ հանդիսացող յարգելի
անձնատրութիւնը, Մխիթար ծած-
կանունին տակ, միութեան խըն-
րայն առթիւ սկսած է կարգ մը
գրութիւններ հրատարակել տալ
Ամբերկայի հայ թերթերուն, և
կրկին նամակներով խնդրած է
մեզմէ արտատպել իր այդ գրու-
թիւնները, որոնցմով կուզէ հայ
ժողովուրդին առթիւ մը ընծայել
Միութեան հարցին վրայ շրջահայե-
ցութեամբ խորհելու և իրեն սե-
փական կարծիք մը կազմելու:

1900ի սկիզբները Հնչակեան
կուսակցութեան գրած նամակին
հետեւեալ հատուածէն Կ'սկսինք
հրատարակել.

Այս հատուածը կը պարունակէ այն
պայմանները որոնք երկու կուսակ-
ցութեանց միջեւ միութիւնը յաջող-
ցնելու կարող եւ յարմար երեւցած են
ինձ և զորս առաջարկած եմ երկու-
քին ալ միանգամայն:

Առ Կեդր. Վարչ. Հնչ. Կուսակ.
«... Ասկէ առաջ արդէն միութեան
համար փորձ մը եղած է: Այդ առթիւ
եղած հրատարակութիւնները զորս այս
օրերս վերստին կարգադրի, ցոյց
տուին ինձ միութեան խորհրդին դէմ
արգելքները որոնք են: Խօսակցու-
թիւններու շարք մը որ ունեցայ Պն.
Արփիարի հետ, ինչպէս եւ հեղինա-
կաւոր դաշնակցականներու հետ, զիս
բողոքովին լուսաւորեցին այս արգելք
ներուն բնութեանը վրայ: Համոզուե-
ցայ որ խոչնդոտ եղող խնդիրները,
որք կը բաժնեն կուսակցութիւնները,
երկու տեսակ են: 1. Անոնք որ կու-
սակցական են և 2. Անոնք որ բուն
իսկ յեղափոխական գործին եւ նպա-
տակին կը վերաբերին: Դիտեցի, որ
զժողարարչները միմիայն առաջին-
ներն են, որովհետեւ ասոնք հալա-
ռակութեան ոգիէ ծնած անձերու խըն-
դիրներ են: Ասոնք ոչ թէ տրամաբա-
նութեամբ ալ կըրթով է որ լուծուիլ
կուզեն. ինձ պիտի մնայ աղաչել որ
երկու կողմն ալ կերթ ցոյց տալէ հը-
րաժարին:

Գալով երկրորդ տեսակին պատկա-
նող խնդիրներուն, ասոնք պիտի կըր-
նան լուծուիլ տրամաբանութեամբ եւ
փորձառութեան դիտելիքներով: Աս
կըրթին աշխատութիւնը ստաջիւնէն
շատ աւելի զիւրին է:

Տեսած եւ ստուգածս սա է թէ կու-
սակցական հակառակութիւնը արտա-
գրած է արդէն սա ցաւալի արդիւնք-
ները. որոնք են.

1. Յեղափոխական ոգւոյն տկարա-
ցումը:

2. Հալածանք եւ բանբասանք ընդ-
հանուր կերպով բոլոր ուսանայիւրուն
դէմ:

Աւելորդ կը համարիմ պնդել թէ
«Մարտ» եւ «Նոր կեանք» էին որ ի-
րենց յօդուածներով տկարացուցին յե-
ղափոխական ոգին: Այս պատճառա-
պէտք է պնդեմ որ այդ թերթերը
վերստանան ոպի մը որ տարբեր ըլ-
լայ միջեւ հիմա ունեցածներէն:

Անխուսձութիւն է, միւս կողմէ,
վարկը կտարիլ բոլոր ուսանայիւրուն
անխտրաբար, քանի որ լաւ գիտենք
որ ատոնցմէ ալ եւան ու զեռ պիտի
եղին յեղափոխական տարբեր: Պն.
Արփիար արդէն ինձ խնդրի խոստո-

նէ յետագումն բառերը, որոնք վերջին երկուշաբթի իր շրթունքը ալբերկաբար ցնցեցին: Երբ Պ. Կիւսկով Ռուսիէ պիտի մտնանայէ կատարուած ու գիւղուած իրողութիւններով յայտնուած վերջին ոճիւրները, թուրք երկրին մէջ ինչ որ է բնական վիճակը, նախաբանին համար անկարելի է աւելի հաստատ խոստումներէ խոսափիլ ու վերջապէս չձայն պարտաւանքի պարբերութիւնը այդ հարստահարութեանց հեղինակին դէմ ցցուած, զոր նախորդ յայտարարութեանց մէջ ի գուր պիտի փնտռէինք:

Հոկտ. 15ին, Պ. Տէլքասէ պարտական պիտի ըլլայ խօսիլ առանց երկդիմութեան ու բառերը սահմանելով:

— Կիրիկիոյ կաթողիկոսի ընտրութեան առաջին նիստին քուէարկութեան ընդհանուր արդիւնքը:

Տ. Սահակ եպս. Խաչատրեան	50
Տ. Գեորգ » Երիցեան	48
Տ. Վահրամ » Մանկունի	45
Տ. Հմայեակ » Դիմաքսեան	43
Տ. Գր. » Թովհանէս.	30
Տ. Մաղաքիա արք. Օրմանեան	28
Տ. Եղիշէ եպս. Դուրեան	22
Տ. Մելք. արք. Մուրադեան	20
Տ. Կիրակոս եպս. Բէքմէկեան	17
Տ. Ներսէս » Արդանեան	16
Տ. Մեսրոպ » Սուքիասեան	2
Տ. Բարձրադիմէոս արք. Չամչեան	1
Տ. Տրդատ եպս. Պայեան	1
Տ. Ներսէս » Գեորգեան	1

Արդէն ըսինք թէ առաւելագոյն քուէ շահող առաջին վեց եպիսկոպոսներէն կը բաղկանայ ընտրելու քուէական ցանկը, զոր Դուռը անմիջապէս սրբազրեւով (.) Պատրիարքարան պիտի յանձնէր, բայց ցարդ չէ յանձնուած. հետեւաբար պատգամաւորք Առանայի մէջ կըստանայ այդ ցանկի հասնելուն, որպէսզի վերջնական ընտրութիւնը կատարեն:

— Ֆրիկիէն 370 ֆր. զրկուած է Պերպէրեան Թոքելեանին համար:

— Կարնոյ երկրաշարժէն արկա. ծեալներուն ի նպաստ Պատրիարքարանի կողմէ հանգանակութեան ձեռնարկուած ըլլալով, մինչեւ շաբաթ օր 1000 լիւրէ աւելի հաւաքուած է Պոլսոյ մէջ: Մերթընդ մերթ կրկնուող երկրաշարժի ցնցումէն ժողովուրդը ահաբեկած, հակառակ ցուրտին և ձիւնին, վերաններու տակ կը բնակին ու խեղճութիւնը ծայր տատնանքի հասած է կը գրեն կարինէն:

— Ծափ ու առջի թատերական քրօնկը տեղւոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թուին մնաց:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻԱ

Օսմանլը պանգասը թապիր օլընուպ ֆազաթ Էփրաթլըրըն սերմայէսի իլէ թէէսիս օլընան պանգանըն սօն աէֆա չըգարըլան պիլանչալընտա թիւրք հիւքիւմէ. թին 3 միլիօն լիւրա տօրճը կէօրիւ. մէքտէ տիր:

— Թիւրք հիւքիւմէթինին Աւստրիա իլէ թանդիմ իթմիշ օլտըզը Եննի մուգաւէլէտէ, քիպրիթ իմթիւզընը Աւստրիոնըն իզնի ալմուգարըն հիշ պիր քիմսէյէ վէրէմէյէճէկի մուգարըն տիր:

— Խարիճիյէ նազըրը Թէպֆիգ բաշա ճոււսա կիւնի՝ ֆրանսըզ սէֆարէթինէ՝ Լօրէնսօ մաթլու. պաթընա պէտէլ 348,480 լիւրալըզ սէնէտընը թէսլիմ իթմիշ տիր:

— Օսմանտան «Թայմզ»-ա եւզըլտըզընա վէ «Նօվօստի» թուսկազէթասընըն թաատիգինէ պիւնաէն, Սուլթան թարաֆնիսան Բէթրպուրկա պիր հէյյէթի մուրախ. խասէ կէօնտէրիլէճէք. պու հէյէթին խուսուսի վէ շօգ էհէմմիյէթի պիր վաղիֆէսի օլաճաղը կիպի, Սուլթանա էն սաուըզ վէ մուհիպ պիր զաթըն ըրիստէթի վէ անըն սերքեաթիպի, վէ եւ. վէրէրինին ըէֆագաթը իլէ հէյէթ թէէքիլ օլընաճազ, վէ Բէթրպուրկա գաւառը Սթանպուլ թուս սէֆարէթինտէն պիր մէմուր տախի պերապէր կիտէճէք տիր: Մէզքիւր հէյէթին եօլա չըգաճա. զը կիւն չիմտիլք մուայէն օլմա. տըլը կիպի, վաղիֆէսի նէտէն ի. պարէթ օլտըզը տախի անշալըմա. մըլ տըր:

— Օսմանլը Բարիզ էլիսի Միւնիւր պէյին ճոււսա կիւնիւ եինէ Բարիզէ ավտէթ իտուպ. մէմուրիյէթինէ տէվամ իտէճէկի Սթանպուրտան պիլտիրիմիշ տիր:

— Մ. Պոթա ճոււսա կիւնիւ սէլաւըգտա պուլընմըլ տըր:

— Երուսաղէմտէ ֆրէնկ բահիպ. լէրի վէ Բոււլար պէյնիտէ պիր մէրտիվէնտէն տօլայը գապկա զուհուրա կէլուպ, Բոււլար սօբա. լարլէ Ֆրէնկլէրտէն 16 քիշի հա. Բէլէմիշլէր. թիւրք ասքէրի եէ. թիւնուպ, գանլը մէնգարէյէ նիհա. յէթ վէրմիշ իսէտէ, իքի գապիթ տախի հարէլէնմիշ, Մեսէլէ գօն. սօլուարա վէ սէֆարէթհանէլէրէ գաւառ չըգմըլ, վէ թուս էլիսի թիւրք հիւքիւմէթինին թուհանի մէսէլէլէրէ միւտախէլէ իթմէմէսինի իթթար էյլէմիշ տիր:

ՏԱԼԻԻԼԻՅԷ

Սօպրանիտէ Բրէնս հալէթլէրինին նութընա ճէվապնումէ թանդիմ վէ Էքիլէն գրաւթիլէ գապուլ օլընմըլ տըր:

Խարիճիյէ նազըրը Պուլկարիանըն ումու մէօվէթլէրլէ վէ պախուսուս Բուսիա վէ Բոււսիա իլէ միւնսէպաթտա, վէ Սերպիա իլէ սամիմի տօսթլըգտա պուլըն. տըլընը պէյան իթթիքտէն սօնրա, Թիւրքիայա սթիք քէլամ իտէրէք տէմիշ տիր: «Թիւրքիա իլէ միւնսէպաթըմըլ թէպէտտիւլթ պուլմամըլ տըր. վէ Մաքթիթիա տա տհվալը հազըրէ տէվամ իթ. տիկի հալտէ պէյնիմիլգտէ սօվուգ. լուգ տէֆ օլմամալ, Էփրաթ Պէրլին ահտամէսինի իճրա իտէր ի. սէ Մաքթիթիա գօմիթէսի լաղվ օլաճազ տըր:»

Խարիճիյէ նազըրը Տօք. Տանէվին Սօպրանիտէ իրաւ իթ. տիկի նութընտա Թիւրքիա իչիւն շու պէյանաթը՝ տօլլուտան տօլլու Պուլկար հիւքիւմէթինին Մաքթիթիա իսլախթընը թալէպ իթմէքտէ պուլընտըլը՝ վէ աք. սի հալիտէ Թիւրքիա իլէ տօսթ օլմայաճաղընը ըհսմէն իլան իթ. մէք տիր:

— Պիր թաղըմ թիւրք մուհա. ճիլէր պու բազար կիւնիւ Բոււսիանըն Տօպրուճա գըթասընտան Պուլկարիա սինսմընա կէլ. մէքտէ Էքէն Պուլկար ասքէրլէր անլէրին իւզէրինէ աթէլ իտուպ, պիր էրքէք վէ պիր գաւառն էօլ. տիւրմիւշլէր տիր:

— Սօֆիատաքի Մ. Ամերիկա գօնսօլուր Մ. Տիքիւնըն Սամաքօֆտան պիր պուլկարըն վասի. թասը իլէ Միս Սթօնտան (աշը. ըլմըլ օլան գրդ) խապէր ալմըլ տըր քի՝ հէր Էքի գաւառընտա սաղ սէլիմ իսէլէրտէ, շաղիլէր 25000 ինկիլիզ լիւրասընըն թէմամէն Մա. մաքօֆտա թէլաւմ օլընմասընը թալէպ իտիյօլուր:

Մէզքիւր թարիզլէ Մ. Տիքիւն. սըն 300,000 ֆրանգ եօլլամըլ տըր. իչպու մէպլաղ Միս Սթօ. նըն թախիսի իչիւն իանէ թօփ. լանմըլ օլուպ, գօնսօլուրն եանըն. տա օ մազսէտ իչիւն պաշպա ագ. ճէ պուլընմայօր:

Շայէթա կէօրէ, Մ. Տիքիւն. սըն տէլիլէր իլէ թաստիգ իթ. միշ քի՝ շաղիլէրին ըէյիսի Պուլկարարտան Տուպնցալը Սանտանս. քի իսմիտէ պիր պուլկար օլուպ, Պորիս Սարաֆօվա մուհիպ տօսթ վէ Մաքթիթիա գօմիթէսինին էսկի ազալարընտան ըմըլ: Սանտիւքի իքի ալտան պէրու քէն. տի խանէսինտէն զայպ օլմուշ տիր:

(Աթանա Բոնմէն)

— Մ. Ամերիկա տա Միս Սթօ. նըն մէսէլէսինտէն տօլայը Էֆ. քեարը ումումիյէ բէք հիտտէթ քէսպ իթմիշ օլտըլը թէլէկրաֆ պիլտիրտիկինտէն մաատա, էկէր Միս Սթօնըն խէլաօը իչիւն մու. խապէրէ նէթիթէսիգ գալըր իսէ՝ Ամերիկա տէվէթի Պուլկարիայա գարըլ շէտիտ թէտպիլլէրէ միւ. բաճաթ իթմէք նիյէթինտէ պուլընտըլընը նիւ. Էքը կազէթալա ըը եազազտա տըրլար:

— «Թան»ըն Սօֆիատան ալտը. զը մալիւմաթա պինաէն, Պորիս Սաօաֆօֆ պու սըրա վիէննտա պուլընուպ, Մաքթիթիա տա քէն. տի թէէսիլինի Աւստրիա տէվէթինին թալիմաթը ալթընա գօյ. մազ թէլէթիլինտէ պուլընմըլ տըր:

«Աթանա Բոււմէն» պու հալաթի. սէ ինանմայուպ, «էկէր տօլլու իսէ Աւստրիա Արաֆօվըն պու թէլէթիլինի հէր հալտէ ըհտտ ի. տէճէք տիրօր:

ԹՐԱՆՍԿԱՆԱ

Պիրլինտէն վէրիլէն պիր թէլէկ.

րաֆ պիլտիրիյօր, «Մէնպաի մէվ. սուգատան թաստիգ իտիլտիկի իւզրէ, պաղը պէօյիւք տէվէթլէ. ըին գաթիլէն պէյան իթթիքլէրի արպու իւզէրինէ՝ ինկիլթէրա Պօ. էրլէր իլէ սուլհ միւզէքէսինէ կիրիշլէլէ մէլլ կէօսթիլմէքաէ տիր: Պու միւզաքէրէնին հաղը. էն մէվգըր իճրայա գօնսօլաճաղը հէր ճիհէթճէ ինանլիյօր:»

ՖՐԱՆՍԱ

— Ֆրանսա մէպուսանընտան Մ. Մ. Էսթրուէլ, Կօշէն, Ումպա, նոյէմ. 15տէ Խարիճիյէ նազըրը Մ. Տէլքասէլէ կիտուպ, Ֆրան. սանըն շու սօն տէֆա Սուլթան. տան թէմին իթթիկի շարթլար. տան տօլայը կիւն էվվէլ մալիւ. մաթ վէ թաֆսիլաթ իսթէմիշլէր:

Մէմգում մէպուսար հէրնէ գաւառ մուլթիլէթ բարթիլէրէ մէնսուպ իսէլէրտէ, շու նօգթա. լարտա քէնաիլէր վէ տիկէր մէ. պուսար տաթի միւլթիլէթի տիր. լէր. եանի Պէրլին ահտամէսինին մուգալիլի օլարազ զատտարըլը ի. տէն Սուլթանը իլէրուտէ ճէզա. սըլճա սէրպէսթ պըրազմամազ, վէ տէվէթլէրլէ միւլթիլէթիլէն՝ Սուլթանըն Էփրաթա խիթապ վէ ինսանիյէթ նօգթաի նազարըն. տա՝ տէրէօհտէ իթմիշ օլտըլը պօրճարընը թանըմասը իչիւն ա. նը իճպար իթմէք:

Մ. Տէլքասէ մէրգում մէպուս. լարըն պաշլըճա Էրմէնի մէսէլէ. սինտէն տօլայը պէյան իթթիկի էֆքիւրա ճէվապ վէրմէք իչիւն իսթիճվապարընը պիր գաշ կիւն թէլիլ իթմէլէրինի, եանի խա. րիճիյէ նէզարէթի պիւտէսինին թայինի մէսէլէսինտէն սօնրա պը. րազըլմասընը ըհա իթմիշ տիր: Մէպուսանտան գօնթ Օնայի տա. խի, պու մազսէտէ մէպնի մէճի. սի մէպուսանտա՝ հինքիւմէթի իս. թիճվապ իթմէք էչիւն, կիւն թա ին օլընմասընը Մ. Տէլքասէտէն թալէպ իտէճէկի սըրատա, տիկէր մէպուսարա վէրիլէն ճէվապը տու. յուպ, նազըրըն հուզուլընա չըգ. մամըլ տըր: Շու հալտէ կիւն մուայէն տէկիլ իսէտէ, եազընէն ֆրանսըզ Բարըլմանընտա պիլիմ մէսէլէտէն տօլայը Ֆրանսանըն մուէսիլը պիր թէտպիր իթթի. խազ իթմէսինի մէպուսար թա. լէպ ու իտուա իտէճէքլէր:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍ

Սապրգ Սատրաղամ Սալիտ բա. շա, Եննիտէն մէվգըր սէտարէթէ կէլմիշ տիր:

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взаимность», Варна